

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 2

Աստուծոյ յայտնութիւնը – Յունարէն բառը Ափոփալիփս է որը նշանակում է փողարակել կամ բացայայտել: Քրիստոնէութիւնը բացայայտած կրօն է: Միւս բոլոր ուրիշ կրօնները մարդու շինածներն են, մարդկային կարծիքներ են:

Աստուած Ինքն իրեն յայտնելու նախափայլ առաւ: Մարդը Աստուծոյ յայտնաբերութեան եւ ինքնայայտութեան ընկալողն է: Առանց Աստուծոյ յայտնութեան մենք Աստուծոյ մասին որեւէ բան չէինք իմանալ:

Աստուած Ինքն իրեն զանազան ձեւերով է յայտնել ինչպէս հին օրերում՝ երազներով, տեսիլներով, երեւումներով, ձայներով, հրաշքներով, մարգարէութիւններով որոնցից շատերը գրւած են: Իր յայտնաբերութիւնների ամենագլխաւորը Յիսուս Քրիստոսն է, որը մարդ արարած եղաւ, որին Աստուածարաններ կոչում են մարդեղութիւն (Եբրայեցիս 1:1-4):

Աստուածարաններ նշում են երկու տեսակ յայտնութիւններ. Բնական (Ընդհանուր) եւ Գերբնական (Յատուկ):

Ընդհանուր Յայտնութիւն – Բնութեան միջոցով եղած Աստուծոյ յայտնութիւնը (Սաղմոս 19:1-2):

- Անուղղակի – Բնութեան կամ ստեղծագործութեան միջոցով Աստուած յայտնում է իր էութիւն (Հոովմ. 1:20)
- Ուղղակի – Աստուած բոլոր մարդկանց մէջ բնածին գիտութիւն է ներդրել: Աստուած ներքնապէս մարդկային սրտի միջոցով յայտնում է իր օրէնքը: Բոլորը ծնւում են խղճով (Հոովմ. 2:14-15)

Սրանք քանակաւ են որպէս ընդհանուր յայտնութիւն յետեւեալ պատճառներով:

1. Լսողները ընդհանուր են (Տիեզերական) – Բոլոր ժամանակների, եւ բոլոր տեղերի ժողովրդները ունեն այս յայտնութիւնը:
2. Պարունակութիւնը ընդհանուր են – Աստուծոյ մասին ընդհանուր գիտութիւն է տալիս (Աստուածութիւն, իմաստութիւն, գորութիւն եւ այլն):
3. Ընդհանուր յայտնութիւնը բաւարար չի: Չի յայտնաբերում Աստուծոյ փրկութեան նամբան:

Ընդհանուր յայտնութեան միջոցով իւրաքանչիւր անհատ իմացել Աստուծոյ գոյութեան մասին:

Անաստուածութիւնը իմացած նշմարտութեան մերժումն է (Սաղմոս 12:1, Սաղմոս 10:4, Առակաց 9:10):

Աստուծոյ վախը իմաստութեան սկիզբն է: Աստուծոյ մերժումը յիմարութեան գագաթնակէտն է: Չարիք Սփըրջնը ասեց թէ «վերին վկայներին կարելի չեն կործանել կամ լռացնել»:

Իրականութեան մէջ, ընդհանուր յայտնութեան շնորհիւ Աստուծոյ մասին տրւած տեղեկութիւնը բաւարար է դատապարտելու բոլորին (Հոովմ. 1:18-21):

Յատուկ Յայտնութիւն – Աստուծոյ ինքնութեան յայտնութիւնը գրւած է Աստուածաշնչի մէջ (Աստուծոյ Խօսք): Այս նախաձեռն է որպէս յատուկ յայտնութիւն յետեւեալ պատճառներով:

1. Լսողները սահմանափակ են – Չի հասնում բոլոր մարդկանց, բոլոր տեղերում: Ամէն մարդ Աստուածաշունչ չի կարդացել:
2. Պարունակութիւնը մանրամաս է – Աստուծոյ բնութեան, նկարագրի եւ Նրա գործունէութեան մասին իւրաքանակ մանրամասնութիւններ է տալիս: Աստուծոյ փրկութեան ծրագիրն ու Քրիստոսի անձը եւ գործն է հո չակում:
3. Յատուկ յայտնութիւնը բաւարար է – Փրկութեան վերաբերեալ բաւարար տեղեկութիւն է տալիս:

Եթէ Աստուած չէր իջել եւ խօսել մեզի հետ ապա երբէք չէինք կարող ոչ մէկս փրկւել (Հոովմ. 10:13-17):